ԳՈՐԻՍԻ ՅՈՒՐԻ ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍԻՐԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Երգ երգոց»

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՍԵՐ, ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ...

ԳՈՐԻՍԻ ՅՈՒՐԻ ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
«ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍԻՐԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ
«ԵՐԳ ԵՐԳՈՑ»

Գրական-երաժշտական միջոցառում

Նախագծի ղեկավարներ՝

- Սոնա Հարությունյան — «Գրականություն» առարկայի ուսուցչուհի
- Լուսինե Գրիգորյան — «Արվեստ» առարկայի ուսուցչուհի

Մասնակիցներ՝

- Շանթ Ավագյան
- Անուշ Արզումանյան
- Էլեն Բալաչյան
- Գոռ Բաղդասարյան
- Բինա Բուլբուլյան
- Սոֆի Գրիգորյան
- Անիտա Գևորգյան

ԲԵՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Բեմը ձևավորված է միջնադարյան հայկական մշակույթին բնորոշ տարրերով՝ մանրանկարների, ձեռագրերի պատկերներով, ծաղկային և գեղարվեստական ձևավորումներով։

Էկրանին ցուցադրվում են միջնադարյան հայկական մշակույթին, Սայաթ-Նովային և Նահապետ Քուչակին նվիրված պատկերներ։

Հնչում է Սայաթ-Նովայի «Կանի վուր ջանիմ» ստեղծագործությունը (դուդուկ կամ քանոն)։

ԲԱՑՈՒՄ

Անուշ Արզումանյան

Բարի օր, հարգելի տնօրեն, ուսուցիչներ, սիրելի աշակերտներ և հյուրեր։

Ուրախ ենք ողջունել ձեզ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում իրականացվող «Միջնադարյան սիրերգություններ» նախագծային աշխատանքի շրջանակում կազմակերպված «Երգ երգոց» գրական-երաժշտական միջոցառմանը։

Սոֆի Գրիգորյան

Այսօր մենք միասին կկատարենք մի յուրահատուկ ճանապարհորդություն դեպի հայ միջնադարյան քնարերգության աշխարհ, որտեղ իշխում են սերը, գեղեցկությունը, հավատարմությունը և մարդկային ամենանուրբ զգացմունքները։

Անուշ Արզումանյան

Հաղորդման նպատակն է ցույց տալ հայ միջնադարյան քնարերգության գեղեցկությունը, մարդկային ազնվագույն հարաբերությունները, աշխարհիկ կյանքի գույներն ու հմայքը, ծանոթանալ Սայաթ-Նովայի և Նահապետ Քուչակի ստեղծագործություններին, բացահայտել ազգային երաժշտության և գրականության կապերը։

Սոֆի Գրիգորյան

Միջոցառման ընթացքում կլսենք ասմունք, կդիտենք սահիկաշար, կունկնդրենք երաժշտություն և կբացահայտենք սիրո հավերժական թեման հայ միջնադարյան գրականության մեջ։

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Միջնադարյան սիրերգություն

Շանթ Ավագյան

Հայ միջնադարյան գրականությունը հարուստ է և բազմազան, լեզուն՝ շենշող գույներով, կենդանի ու բնական, համ ու հոտի աննկարագրելի պաշարով։

Միջնադարյան գրականությունը ներառում է պատմագրություն, հոգևոր գրականություն և հատկապես քնարերգություն։

Քնարերգությունը արտահայտում է մարդու հոգու խորքը, սիրո զգացմունքները և մարդկային հարաբերությունները։

Գոռ Բաղդասարյան

Մեր նպատակն է ցույց տալ, թե ինչպես է սիրերգությունը փոխանցվել սերնդեսերունդ և ինչպես է այն շարունակում մնալ մեր մշակույթի անբաժանելի և յուրօրինակ մասը։

Միջնադարի սիրո երգերը ազնվացնում են մարդու հոգին, դարձնում առաքինի, մաքրամաքուր թե՛ զգացմունքների, թե՛ կենսակերպի մեջ։

ՍԱՀԻԿԱՇԱՐ

Հայ միջնադարյան սիրերգություն

Անիտա Գևորգյան

Սահիկում ներկայացված է հայ միջնադարյան սիրերգության պատմությունը։

Մենք տեսնում ենք, որ քնարերգությունը մեծ դեր ունի ժողովրդի կյանքում և մշակույթի մեջ։ Հայտնի սիրերգակները երգել են մարդկային բուռն սերը՝ ազատագրելով այն դոգմատիկ կաղապարներից։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Սայաթ-Նովա

(Էկրանին ցուցադրվում է Սայաթ-Նովայի դիմանկարը)

Էլեն Բալաչյան

Սայաթ-Նովան ոչ միայն հայ, այլև համաշխարհային սիրերգության բացառիկ դեմքերից է։ Նա հայտնի է իր աշխարհիկ սիրերգությամբ և աշուղական ստեղծագործություններով։

Միջնադարի քնարերգությանը առանձնակի գույներ և համ-հոտ է տվել Սայաթ-Նովան՝ բարձրացնելով այն արվեստի նոր աստիճանի։

Նրա բանաստեղծություններում արտահայտվում են սերը, կարոտը, հավատարմությունը և մարդկային զգացմունքների խորությունը։

Վարդի ու Բլբուլի սիրո պատմությունը միջնադարյան սիրերգության առանցքային թեմաներից մեկն էր, որի հիման վրա ստեղծվել են բազմաթիվ անմահ գործեր։

ԱՍՄՈՒՆՔ

Շանթ Ավագյան

Աշխարհումըս ա՛խ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա։
Անմահական ջըրով լիքըն օսկէ փընջան իս ինձ ամա։
Նըստիմ՝ վըրէս շըվաք անիս՝ զարբաբ վըրան իս ինձ ամա։
Սուչս իմա՛ցի, է՛նէնց սպանէ՝ սուլթան ու խան իս ինձ ամա։

Գոռ Բաղդասարյան

Մէջքըդ՝ սալբու-չինարի պէս, ռանգըդ փըռանգի ատլաս է,
Լիզուդ՝ շաքար, պըռոշըդ՝ դանդ, ակռէքըդ մարգրիտ, ալմաս է։
Օսկու մէջըն մինա արած, աչքիրըդ ակնակապ թաս է։
Պատուական անգին ջավահիր, լալ-բադէշխան իս ինձ ամա։

Բինա Բուլբուլյան

Յիս էս դարդին վո՞ւնց դիմանամ, մակա՞մ սիրտըս ունիմ քարած։
Արտա՛սունքս արուն շինեցիր, խիլքըն գըլխէս ունիմ տարած։
Նուր բաղ իս՝ նուր բաղչի մէջըն՝ բոլորքըդ վարդով չափարած։
Վըրէդ շուռ գամ բըլբուլի պէս՝ սիրով սէյրան իս ինձ ամա։

Անիտա Գևորգյան

Քու էշխըն ինձի մաստ արաւ, յիս զարթուն իմ, սիրտս է քընած։
Աշխարհս աշխարհով կըշտացաւ, իմ սիրտըս քիզնից սով մընաց։
Եա՛ր, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարհումըս բա՛ն չըմընաց։
Կրա՛կէ, ծովէմէն դուս էկած ռաշ ու ջէյրան իս ինձ ամա։

Էլեն Բալաչյան

Ի՞նչ կուլ՝ մէկ հիդրս խօսիս, թէվուր Սայաթ-Նովու եար իս։
Շուղքրդ աշխարհրս բռընիլ է՝ արեգագի դէմրն փար իս։
Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարդ, մանուշակ, սուսանբար իս։
Կարմրրագուն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա։

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՍԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Սոֆի Գրիգորյան

Սայաթ-Նովան կանգնած է մեր մեջ, մեր կողքին և ժամանակի միջով մեզ է փոխանցում ամենամարդկային, ամենամարդասիրական զգացմունքները։

Էլեն Բալաչյան

Սերը մարդու հոգու լույսն է։
Առանց սիրո կյանք չկա։
Սերը հրաշագործ է, սերը՝ ամենազոր։ Միայն այն սերն է արդարացի, որը ձգտում է դեպի գեղեցիկը՝ չպատճառելով ոչ մեկին ցավ։

Բինա Բուլբուլյան

Սերը մեկն է այն զգացմունքներից, որոնք անհնար է թաքցնել։ Մի բառ, մի անզգույշ հայացք, և նույնիսկ լռությունը բավական է այն մատնելու համար։
Սայաթ-Նովան մեզ թողնում է կարևոր պատգամ՝ սերն է կյանքի շարժիչ ուժը։

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Նահապետ Քուչակ

(Էկրանին՝ Նահապետ Քուչակի պատկեր)

Անուշ Արզումանյան

Հայ միջնադարյան սիրերգության մյուս մեծ ներկայացուցիչը Նահապետ Քուչակն է։
Նրա հայրենները համարվում են հայկական սիրային քնարերգության լավագույն նմուշներից։

Սոֆի Գրիգորյան

Նահապետ Քուչակի ստեղծագործություններում սերը ներկայացվում է որպես մարդու կյանքի բնական, ազնիվ և վեհ զգացմունք։
Նրա հայրենները լի են պատկերավոր լեզվով, խոր հուզականությամբ և ժողովրդական իմաստությամբ։

Շանթ Ավագյան

Քուչակի ստեղծագործությունները դարեր շարունակ պահպանել են իրենց արդիականությունը՝ փոխանցելով սիրո, հավատարմության և մարդկային գեղեցիկ հարաբերությունների գաղափարը։

Գոռ Բաղդասարյան

Նրա պոեզիան այսօր էլ շարունակում է հուզել ընթերցողին՝ հիշեցնելով, որ իսկական արժեքները ժամանակի ընթացքում չեն հնանում։

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Սոֆի Գրիգորյան

«Միջնադարյան սիրերգություններ» թեմայով նախագծային աշխատանքը ղեկավարել են «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Սոնա Հարությունյանը և «Արվեստ» առարկայի ուսուցչուհի Լուսինե Գրիգորյանը։

Անուշ Արզումանյան

Նախագիծն իրականացրել են 8-րդ «Բ» դասարանի աշակերտները՝ Շանթ Ավագյանը, Անուշ Արզումանյանը, Էլեն Բալաչյանը, Գոռ Բաղդասարյանը, Բինա Բուլբուլյանը, Սոֆի Գրիգորյանը և Անիտա Գևորգյանը։

Շանթ Ավագյան

Ես ուսումնասիրել եմ միջնադարյան գրականությունը, մասնավորապես սիրերգությունը, գտել եմ տարածում գտած երգերն ու հայրենները։ Այդ աշխատանքն ինձ օգնել է զարգացնել հետազոտական և վերլուծական կարողություններս։

Գոռ Բաղդասարյան

Ես պատրաստել եմ սահիկաշարը, հավաքել և մշակել անհրաժեշտ տեղեկատվությունը։ Աշխատանքի ընթացքում զարգացել են իմ տեղեկատվական և տեխնոլոգիական հմտությունները։

Բինա Բուլբուլյան

Ես կազմակերպել եմ կինոդիտումը և երաժշտական հատվածները։ Այս աշխատանքն օգնել է զարգացնել իմ ստեղծագործական կարողություններն ու երաժշտական հետաքրքրությունները։

Անուշ Արզումանյան

Ես կազմել եմ «Երգ երգոց» հաղորդաշարի սցենարը, որի շնորհիվ զարգացրել եմ ստեղծագործական և վերլուծական հմտություններս։

Սոֆի Գրիգորյան

Ես իրականացրել եմ դերաբաշխումը և կազմակերպել փորձերը, ինչի արդյունքում ձեռք եմ բերել հաղորդակցման և կազմակերպչական նոր հմտություններ։

Անիտա Գևորգյան

Ես համակարգել եմ մրցույթ-վիկտորինայի հարցերի կազմումը և նախագծի կառուցվածքը։

Էլեն Բալաչյան

Ես իրականացրել եմ բեմի և միջոցառման գեղարվեստական ձևավորումը, որի ընթացքում առավել զարգացել են իմ նկարչական և ստեղծագործական կարողությունները։

ԱՄՓՈՓՈՒՄ

Էլեն Բալաչյան

Այսօր մենք ևս մեկ անգամ համոզվեցինք, որ միջնադարյան սիրերգությունը շարունակում է ապրել մեր մշակույթում և մեր հոգիներում։

Բինա Բուլբուլյան

Սիրո, գեղեցկության և բարության գաղափարները երբեք չեն կորցնում իրենց արժեքը։

Սոֆի Գրիգորյան

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցեցին նախագծի իրականացմանը և դարձան այս գեղեցիկ նախաձեռնության մասնակիցը։

Անուշ Արզումանյան

Շնորհակալություն ուշադրության համար։

Թող սիրո, գեղեցկության և մարդկային ջերմության երգը մշտապես հնչի մեր սրտերում։

ՎԵՐՋ

(Հնչում է Սայաթ-Նովայի երգերից մեկը, մասնակիցները խոնարհվում են, ցուցադրվում են նախագծի ընթացքում կատարված աշխատանքների լուսանկարները)։